


891.99

Q-93



891.542-3
9-97

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ
13 NOV 2011

2011

ՄԱՐՈ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԿԻՆԸ

1007
3224

ՊԱՏՄՎԱԾԻ

ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հրատարակւոյցն «ՊՐՈԼԵՏԱՐ» քերի
ԹԻՖԼԻՍ—1929 թ.



ԲԱՆՎՈՐՈՒՅԻ-ԳԵՂՋԿՈՒՅԻ

Պատգամի՛ր Մեծ Հոկեմքերի նվաճումները:
Անողոմ կոխվ անկուսուրականության, անկրթության, կեղտի դեմ:

Կուսուրական արեալ հին կենցաղի դեմ:
Ավելի ուժեղ կրակ Արեվելի աշխատավորուհիների կենցաղային ստեղծության դեմ: Առաջ դեպի սոցիալիզմ:

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԿԻՆԸ

(Գ ա ս մ վ ա ծ Բ)

Ուշ գիշեր էր: Զյունախառն բարակ անձրևը մազում էր վերեկից: Փողոցի լապտերը ծուլորեն լուսավորում էր թաց մայթերը:

Գիշերային պահապանը ձեռնափայտին հենված ննջում էր լապտերի առկ, սակայն ցուրտը նրան ուշքի չէր բերում, և նա հանցավորի նման նինջը ծածկելու համար մեղմ սուլում էր, հայտնելու հարևան անկյուններում կանգնած մյուս գիշերապահներին, թե ինքն արթուն է: Շատ չանցած նա լսում էր նույնաման սուլոցներ խաչաձև փողոցների այլ անկյուններից:

Պահապանից մի քանի տասնյակ քայլ հեռու, մոտակա փողոցի մութ անկյունում, անհանգիստ քայլում էր միջհասակ մի կին:

Ձեռները դրած կարկատած թավիշ վերարկվի թևերի մեջ, մրսած վտանները յերբեմն մայթին խփելով նայում էր նա շուրջը և իբրև պատասխան տիրող լուսթյանը, դժգոհում:

— Այ անհաջող ո՛ր, առավոտից վոչ մի կանոնավոր հանդիպում... իսկ նա, հն... (և կինը բաց թողեց մի կծու բառ), բավական չե վոչինչ չտվեց, դեռ ծեծն ել ավելի: Փու, մինչև հիմա նրա հարվածներից խելքս գլուխս չի գալիս: Այսօր չեմ խըմել, բայց հարբածից վատթար եմ: Ո՛ւ, վիճակ, վիճակ, հառաչեց նա և կրկին դիտելով ամայի փողոցը, նստեց մայթի մոտ դռներից մեկի քարե աստիճանին:

Գլուխը ձեռների մեջ առած յերկար ժամանակ նստած էր նա: Ապա կորցնելով հավասարակշռութունը, թեք ընկավ պատին և, ըստ յերևույթին, քնեց: Խայտաբղետ ժապավենով զարգարված գլխարկը բարձրացավ նրա գլխից, իսկ գանգուրած շեկ մազերն անկանոն թափվեցին ճակատին: Այդ զրության մեջ ներկած այսերն ու շուրթերը աարորինակ տեսք էյին տալիս նրա գունատ դեմքին:

Քունը զնալով խորանում էր, և նա անզգա, բաց բերանով արդեն սկսել էր խոսվացնել, յերբ փողոցի հակառակ կողմից մի

անցորդ մտեցավ նրան և կանգ առավ: Քմծիծաղ տ սլով նայեց նա քնածին և ապա վոտքի մի հարված հասցնելով գոչեց.

— Ե՛յ, փողոցային, թե քնելու տեղ չունես, յեկ տանեմ մոտս:

Կինը շարժվեց, քնաթաթախ հայացքը հառեց անծանոթի դեմքին, անորոշ արտահայտությամբ թարթեց յերբեմնի ժղպտուն աչքերը և աստիճանաբար ուշքի գալով մոմոաց.

— Իսկ փողը կանխիկ կտաս:

— Սրան նայեցեք, յես նրան քնելու տեղ եմ առաջարկում, վոր փողոցում չմնա, իսկ նա դեռ փող էլ ե ուզում, դայրացած ձեանալով գոչեց անծանոթը:

— Քնելու տեղ... շուն, դու չե՞ս հասկանում, վոր ամբողջ որը վոչինչ չեմ կերել, ասավ կինը և թուքը հավաքելով ազահությամբ կուլ տվեց:

— Դե, վեր կսց, շատ մի խոսիր, յեկ յետևիցս, այնտեղ գուցե վոչ միայն ուտելու, այլ և լակելու բան գտնես քեզ համար:

— Ձե, անփորձներից չեմ, խոսքով չես խաբի, կանխիկ հասկանում ես, թե չե հեռացիր, հանգիստ թող ինձ:

— Ե՛հե, վաղճեց և զինդ այդպես բարձրացել, վոր համարձակվում ես ինձ նման մարդուն այդպես մերժել, ասավ անցորդը խրոխտ դիրք ընդունելով:

Կինն արհամարական հայացքով չափեց նրան վերեց վար և հենվելով պատին աշխատեց կրկին հարմար դիրք ընդունել քնելու համար:

Սակայն համառ անցորդը հանգիստ չեր տալիս:

— Դու ինձ պատասխան չես տալիս հմ, յես քեզ կստիպեմ, ասաց նա և կանգնած տեղում որորվելով դանդաղությամբ հանեց ձեռքը վերարկվի գրպանից ու մատները ձգելով կնոջ ճակատի խոպոպներին, սկսեց ձիգ տալ:

Կինը ձիչ արձակեց և սուր յեղունդները թաղելով հարբած անցորդի ձեռքերում, սկսեց հայհոյել:

— Դու կերել ես, լափել, լակել, ով զիտե ում փողերով, հիմա յեկել ես նույն ձեռով ինձանից ողտվելու. չե, չես տեսնի, գարշելի շուն:

— Ձեմ տեսնի, ծաղրանքով գոչեց անծանոթը և մի այնպիսի հարված հասցրեց կնոջ կրծքին, վոր նա ուշաթափ զլորվեց:

Աղմուկին վրա հասավ գիշերապահը: Նա չարագույժ սուլոցով ոգնության կանչեց մոտակա գիշերապահներին: Սուլոցի

ձայնից փողոցների մութ անկյուններից չղջիկների նման դուրս սողացին զանազան մութ մարդիկ տարբեր հասակի, տարբեր տարադի, և քնած փողոցը կենդանացավ:

Աղմուկը գնալով մեծացավ: Բոլորը խոսում էին, հայհոյում, քաշքշում միմյանց: Այս ժխորի մեջ դժվար էր վորոնել իսկական հանցավորին, վոր ողտվելով հանգամանքից, ծլկվեց, հեռացավ:

Վրա հասնող յերկու քաղաքապահ միլիցիոներները ցրելով կանգնած ամբոխին, կառք դրեցին ուշաթափ կնոջը և տարան դեպ միլտուն:

Փողոցը կրկին ամայացավ, և գիշերային պահապանն անցավ իր տեղը: Սակայն լուռ փողոցներում արձագանք տվող հեռացող կառքի խուլ դղրդունն իր հետ տարավ գիշերապահի մտքերը:

Հենված իր հաստ ձեռնափայտին, նա այլևս չեր ննջում, մոռացել էր անգամ իր մեղմ սուլոցը: Իսկ յերբ ականջին հասնում էր ընկերների կանչը, նա պատասխանում էր մեքենայաբար, վորի մեխամաղձոտ ձայնը ծուլորեն ծավալվում էր ձյունախառն թաց ողոււմ:

Ծխախոտի դառը ծխի հոտով թմբած, մուգ շագանակագույն պաստառով պատած սենյակում, խավար լույսի տակ, նեղ նստարանի վրա կիսահենված ննջում էր հերթապահ ավագ միլիցիոները:

Նրա առջև դրված մերկ սեղանի վրա, վորի յերեսը ներկվել էր զանազան գույնի թանաքի բծերով և հեռախոսի համարներով, դրված էր մի փոքրիկ թանաքաման, զրիչ, մի թերթ մաքուր թուղթ և մի քանի հին ու նոր լրագրներ. իսկ պատից կախված հեռախոսի ապարատը, յերբեմն-յերբեմն իր ուժեղ զրրնագոցով անհանգստորեն վեր էր թռցնում թիկնած հերթապահին:

Քաղաքապահների կառքը կանգ առավ միլիցիատան առջև: Միլիցիոներները հագիվ իջեցնելով կառքից կիսով չափ ուշքի յեկած կնոջը, մի կերպ ներս հասցրին:

Ավագ միլիցիոներն ուղղվեց տեղում, քնկոտ հայացքը ճշպելով վառեց ծխախոտը և հարցական նայեց յեկվորներին:

— Հարբած ե:

— Ձգիտենք, կարծես թե վոչ:

— Ապա ինչո՞ւ յեք բերել:

Միլիցիոններին մեկը պատմեց յեղեղութ՞յունը:

— Իսկ ո՞ւր ե հանցավորը:

— Նա փախել ե, չգտանք:

— Չարմանալի մարդիկ եք, գոչեց ավագը: Հանցավորը փախել ե, իսկ տուժողին բերել եք այստեղ: Դրան հարկավոր ե հիվանդանոց տանել, բժիշկ հասցնել:

— Վոչինչ, սրանք սովոր են, պատասխանեց միլիցիոններին մեկը, ցավը կանցնի, ուշքի կգա և կգնա իր ճամբով: Թող սա խրատ լինի, վոր ել բարձր չգա մայթերի վրա:

Կինը, վոր լսում եր այս խոսակցութ՞յունը, հիվանդ դեմքով մի դառնացած հայացք ձգեց խոսողի վրա և ատամների արանքով դժվարութ՞յամբ արտասանեց.

— Ա՛խ դուք անմիտ, անսիրտ անասուններ, ինչպես նման եք բոլորդ միմյանց: Դուք չեք հասկանում վոչինչ, վոչինչ:

— Լսիր, անմախ, դարձավ խոսող միլիցիոններին նրա ընկերը. դու յեթե չես կարող ոգնել, գոնե փիլիսոփայութ՞յուն մի անի:

— Ախար ինչո՞ւ յեք նրան այստեղ բերել, կրկին հարցրեց ավագ հերթապահը:

— Հիվանդանոցում հիմա չեն ընդունի, թույլ տվեք նրան գեթ այստեղ մնալ մինչև առավոտ, կիսախնդրանոք պատասխանեց միլիցիոնները: Այս վիճակում նա փողոցում կմեռնի, իսկ այստեղ գոնե պահանջված դեպքում կարելի յե բժիշկ հասցնել:

— Տարեք հարևան սենյակը, կարգադրեց ավագը և կրկին թեք ընկավ տեղում:

Միլիցիոններներն ուղեկցելով կնոջը հարևան սենյակը, վորը համեմատաբար ավելի ցուրտ եր, պառկեցրին նստարանի վրա, շուր տվին և հեռացան:

Քիչ անց նրանցից մեկը կրկին ներս մտավ մի կտոր հաց և պանիր ձեռքին:

— Դուցե կցանկանեք, դարձավ նա կնոջը:

Կինն ազահութ՞յամբ ձեռքը մեկնեց, բարձրացրեց գլուխը և ատամները թաղեց հացի մեջ: Մակայն քիչ անց, հագիվ կուլ տալով առաջին պատառը, ձեռքից վայր գցեց հացի կտորը և կուրծքը բռնած հառաչելով ընկավ նստարանին:

Միլիցիոնները, գյուղական դեմքով մի յերիտասարդ, մոտեցավ նրան և կռանալով կարեկցաբար հարցրեց.

— Ի՞նչ պատահեց, քույրիկ, կուրծքդ ցավում ե:

Կինը զարմանքով նայեց նրան և ջերմ խոսքից կարծես հալվելով, աչքերից արցունքի խողոր կաթիլներ գլորեց.

— Այո, ցավում ե, հարվածն ուժեղ եր, այսօր յերկու անգամ են ծեծել ինձ: Բայց ի՞նչպես ե, վոր դու արժանի յես համարում ինձ, պտռնիկիս, քույրիկ անվանել:

Միլիցիոններն ուզեց պատասխանել, բայց այդ միջոցին լավեց ավագ հերթապահի ձայնը, վորը կանչում եր նրան, և նա դուրս գնաց, գիշերային դռնապանի նման իր մտքերը թողնելով վաճառվող կնոջ այն կենդանի մարմնի մոտ, վորն ընդունակ եր տակավին դատել և զգալ քաղց ու ցավ:



Լույսը բացվում եր:

Հոգնած դռնապանը հանձնելով պոստն իր հետնորդին, դանդաղ քայլերով դիմեց սուռն, խոր մտքերի հետ բերանից բաց թողնելով և ծխախոտի թանձր ծուխը:

Տանը, փոքրիկ մաքուր սենյակում, սեղանի վրա արդեն թշնամ եր դեղին, վոսկու նման փայլող հին, ծուռ ինքնայնուր, վորի մոտ ախորժեղի գոլորշի արձակելով դրված եր խաշած գետնախնձորն ափսեյով, աղամանը և բարակ շերտերով կտրաված հացը. իսկ կարմիր շրջագծով պարսկական ճաշակի հնավուրց պնակների վրա բազմել եյին կլոր ու անկյունավոր տարբեր ձեվերի բաժակները:

Դռնապանը զարմացած նայեց կնոջը:

— Ես ի՞նչ շուտ ես պատրաստել, կնիկ, խեր լինի, ասաց նա: Թուխ գեմքով, սիրունատես նրա կինը, ուրախ նայեց ամուսնուն և պատասխանեց.

— Խեր չլինի, ինչ պիտի լինի, մարտի ութը մոտենում ե, պատրաստութ՞յուն ենք տեսնում: Շուտ պատրաստեցի ամեն բան, վոր թեյ խմենք, հետո յերեխանցը թողնեմ, յես զնամ ընկերներին ոգնելու:

— Բան չունեմ ասելու, պատասխանեց դռնապանը. գե վոր գուր ել գործ եք անում, արեք, համա... նա ուզում եր պատմել գիշերվա անցքը, սակայն կանգ առավ:

— Չե, տո, հիմի սա հո չի հավատա բոլոր ասածներին, ով գիտե, ինչ կմտածի ու ել ոճիքս բաց չի թողնի, մտածեց նա և լռեց:

Հոգնած, մրսած դռնապանն ախորժակով կերավ, խմեց և

պատրաստվեց քնելու, իսկ կինը հավաքելով թեյի պարագաներն, ասաց.

— Յերեխաները դեռ քնած են, դու ել պառկիր, յերբ կզարթնես, մի յերկու կրակ գցիր ինքնայտի մեջ, տաքացրու և թեյ տուր: Նրանք վոր կուշտ լինեն, խելոք կմնան: Մենակ չթողնես, ետոր ել դու գրադեցրու: Միշտ նախանձում ես, վոր ինձ շատ են սիրում. նստիր տանը, թող ետոր ել քեզ սիրեն, ասաց կինը ծիծաղելով և ավելացրեց.

— Կաշխատեմ շատ չուշտնալ:

Նա ուզում եր արդեն հեռանալ, ամուսինը կանչեց.

— Աղջի, Ծանդիկ, մի ասա, ի՞նչ եք անում մարտի ութի համար:

— Ո՛ւհ, վոր տեսնես մեր կլուբը, չես ճանաչի, ենպես զարդարել են մեր շահելները, պատասխանեց կինը:

— Ե՞րբ

— Ել՛ ժողովներ ենք ունենալու ամեն տեղ, գյուղերն ենք գնալու:

— Բա հենց ե՞րբ:

— Ձե, կարմիր կնուռք կլինի, կարմիր հարսանիք:

— Եհ, եղ չեղավ, դրանցով վոր չի կշտանա, դու են ասա, ի՞նչ եք անում են քյասիբ կանանց համար, վորոնք վոչ տուն ունեն, վոչ գործ, վոչ հաց:

Ծաղիկը մի փոքր մտածության մեջ ընկավ:

— Ի՛նչ հիմի եղքանին վճրտեղից կարող ենք մենք տուն, գործ յա հաց տալ, պատասխանեց նա:

— Ձե, ինչ ուզում ե լինի, նրանց մասին ել պետք ե մըտածել: Ե՛, վոր գիտենաս աշխարհում ինչեք կան, ասավ ամուսինը մտազբաղ, ծխախոտի ծուխը կուլ տալով:

Կինը կանգ առավ և գլուխը ցած ձուխով նայեց ամուսնու աչքերին:

— Հ՞ը, եղ ինչ շատ ես դարդ անում դու ետոր աղքատ կանանց համար:

— Գիտեյի, վոր յախես բռնելու յե, մտածեց դոնապանը, բայց և վճռականապես դարձավ կնոջը.

— Հանաքը մի կողմ, Ծանդիկ ջան, մի բան եմ ասելու քեզ, կարելի յե ետոր դու մի բան անես կին բաժնի միջոցով:

— Ի՞նչ ե:

— Նստիր, ասեմ:

Ծաղիկը քանդեց գլուխը կապած բրդե շալը և նստելով ամուսնու մոտ պատրաստվեց լսելու:

Դոնապանը մանրամասնորեն պատմեց դիշերվա անց ու դարձը:

— Ա՛խ, Ծաղիկ ջան, դրանց տեսնողը քարե սիրտ պիտի ունենա, քարե սիրտ, վերջացրեց նա իր խոսքը:

— Դե լավ, եղքան ել լաց մի լինի նրանց համար. ո՞վ ե ստիպում: Ձեն ուզում, չանեն. քիչ աղքատ կին կա, վոր լվացք ե անում, ամեն գործ կատարում, բայց եղ ճամբով չի քնում:

— Ձե, եղ մի ասի, հենցը կա լվացք անել չգիտե, հենցն ել կա, անելը գիտե, գործ չունի. պատճառները շատ են, վոր տեսնես, ինչպիսինեք են գալիս...

— Ձե, չե, մարդ իրենից ե, վոր չուզենա, հաց կմուրա, եղ չի անի, Դավիթ ջան, ձեռքը բացասաբար շարժելով, համոզված դարձավ Ծաղիկը մարդուն:

— Այ սարսաղ, հենց եղ մուրալն ե ամեն բան փչացնում ե. Մարդ ու կին յերկար վիճեցին:

— Ո՛հ, յես ուշացա, ասաց վերջապես Ծաղիկը և շտապ դուրս յեկավ տնից: Դավիթն ել պառկեց, սահայն քունը յերկար ժամանակ խույս եր տալիս նրա հոգնած աչքերից:

Կես որին մոտ Ծաղիկը տուն վերադարձավ: Դավիթը դեռ քնած եր, իսկ արթնացած յերեխաները—6 տարեկան աղջիկը և 4 տարեկան տղան—մի-մի կտոր հաց ձեռներին դեռ թավալվում եյին անկողիններում:

Վեր կաց, այ մարդ, վեր, կանչեց նա ամուսնուն ծիծաղելով. այ թե լավ ես նայել յերեխանցը: Ձե, քեզ պես մորն այնքան ել շատ չեն սիրի նրանք:

Դավիթն արթնանալով հանցավորի նման նայեց կնոջը:

— Ձե, Դավիթ ջան, դու ի՞նչ անես, աճրողջ գիշերն այնքան կանգնել ես ձյունի, անձրևի տակ, բա կարո՞ղ ես արթուն մնալ, յերեխա պահել: Ծիշտ ե ասում մեր խմբակավարը, վոր միակ փրկությունը մանկատունն ե, մսուրը, հրապարակը: Ապա ավելացրեց.

— Հա, ետոր քո ասած հարցի մասին ենք քան ենք խոսել.

— Վե՞րջը.

— Վերջն այն, վոր դու ձիշտ ես: Բանից դուրս յեկավ, վոր կանանց կենցաղը բարելավող հանձնաժողովը մտածել ե այդ մասին և մարտի ութին բացվում ե անապաստան կանանց տուն: Նրանց այնտեղ կտան ապրելու տեղ և ուսելիք, մինչև գործի լինես: Եղ տանը կից լինելու յեն գանազան արհեստանոցներ, վորտեղ նրանք կարող են և՛ արհեստ սովորել և՛ հաց վաստակել:

Ուրախության մի լայն ժայիտ խաղաց դոնապան Գավթի գեմքին:

— Յեթե են կնոջը հանդիպեմ, կուղարկեմ քեզ մոտ, վոր դու ցույց տաս տեղը:

— Լավ, խորամանկ ժպիտով ասաց կինը, բայց յես նրա հետ չեմ գնա, ինձ տեսնողն ի՞նչ կասի:



Անցել եր տարի: Մոտենում եր մարտի ութը:

Լոզունգապատ ակումբի դահլիճում հավաքվել էյին բազմաթիվ բանվոր-բանվորուհիներ:

— Եքսկուրսիա յե, գնում ենք հիմնարկներին, ձեռնարկներին ստուգատես, ասում էյին ուրախ միմյանց:

Շատ չանցած, խմբերի բաժանված, տարբեր ուղղությամբ դիմեցին նրանք քաղաքի այլ և այլ կողմերը:

— Յես կգնամ անապատանների տունը տեսնելու, ասաց Մադիկը և քայլեց իր խմբի հետ:

Նրանք կանգ առան քաղաքի ծայրամասի լայն փողոցում հոյակապ մի տան առջ:

— Հեյ գիտի հա, վաղուց ե, դեսը չեմ յեկել, ինչքան բան ե փոխվել, ասաց բանվորներից մեկը:

— Հա, գիտեյի, եղ պիտի ասես, ասաց մի այլ բանվոր նրան, — միտղ ե, են Վոլոդյորմածիկ սոված Մարգիտովը, վոր ժուլիկությունով փողրաթ վերցրեց կովի ժամանակ ու մի տարի չանցած հարյուր հազարներ դիզելով ես տունն ել շինեց:

— Ինչի՞ չեմ շինի, գիշերը քննն եր կարել թե կար անելով աչքը կուրացրել: Աշխարհում աղքատ մարդ չմնաց, քչեցին սալդաթ, ողլուշաղին սոված թողին: Խեղճերն սկսեցին սալդաթի շոր կարել փողրաթչու համար, համա որական 18—20 ժամ աշխատող եղ խեղճերին 1—2 գրվանքա հացի փող ել չեմ տալիս եղ քարասիրտ գաղանը, մեջ մտավ մի բանվորուհի:

— Մենակ եղ ես ասում, բա են, վոր նրանցից սիրուններին ել փողի ուժով խելքից հանում եր ու հետո «աննամուս» անելով փողոց շարտում, եղ վոչի՞նչ:

— Եհ, մենակ նմ յեր: Նրա պես քանի քանիսներն էյին են ժամանակ տեր տիրական դառել աշխարհին ու աղքատի արյունը ծծում, ասին այս ու այն կողմից մյուս բանվորները:

— Հա, արին, բայց իրենց չմնաց, մենք ել լավ աչքները հանեցինք, ու նրանք հիմա հին սերթուկները դեռ հագնեցին,

հրեն բուլվարներում նստած հիշում են իրենց հին փառքը, համա դեհ, ել ինչը կոգնի. — Շնապաստակը փախավ, սիրական, ախաղ փառացս անցավորի, սիրական», ասավ առաջին խոսող բանվորը — Սանդրոն, և բոլորը փառ-փառ ծիծաղեցին:

Մինչ այդ, յեկավ ապաստարանի վարիչը և ներս ուղեկցեց այցելուներին:

— Այս տան նպատակն ե սկզբնական ողնություն հասցնել այն անապատան կանանց, վորոնք տուն և աշխատանք չունենալու պատճառով մնում են փողոցում: Սակայն, յերբեմն գալիս են և այնպիսիները, վորոնք թեև ունեն վորոշ անցյալ... բայց հոգնել են այդ կյանքից: Այստեղ աշխատում ենք տալ նրանց վորեւ մասնագիտություն և վարժեցնել հարատև աշխատանքի, ասաց վարիչը և բանալով առաջին դուռը՝ հյուրերին տարավ կոշկակարական արհեստանոցը:

Ընդարձակ սենյակում, յերկու կարգ շարված ցածրիկ յերկար սեղաններին շուրջ բոլորած, նստել էյին 15—20 կին:

Այստեղ կան մի քանի ազգության, տարբեր միջավայրերի կանայք: Սրանք կարում են հեշտ ձևի կոշիկներ, ամրան սուրբ, սանդաղներ: Վարպետը տղամարդ ե, բայց մեղմեցից 2—3 հոգի այնքան վարժվել են, վոր հավանական ե կարճ ժամանակից կարողանան նրան փոխարինել:

Անցնելով հարակից սենյակը — նույնանման մի դահլիճ, վարիչը շարունակեց.

— Սա կարի արհեստանոցն ե:

Այստեղ ևս մի շարք սեղանների և մեքենաների առաջ նըստած կամ կանգնած աշխատում էյին կանանց խմբերը:

— Բոլոր արհեստանոցներում տիրում ե աշխատանքի բաժանման սիստեմը, բացառեց վարպետներից մեկը:

— Յուրաքանչյուր բնակչուհի ապրելով այստեղ, սկսում ե աշխատանքն ամենահեշտ մասից և աստիճանաբար մասնագիտանալով, անցնում ե արհեստի ավելի բարդ ձևին:

Այնուհետև վարիչը նույն կարգով ցույց տվեց գլխարկի, գուլպայի, կաղամարարության և տուփերի արհեստանոցները:

— Քանի՞ հոգի յեն ապրում ներկայումս ապաստարանում, հարցրին յեկվորները:

— 140.

— Բոլորն են աշխատում:

— Բացի ութ հոգուց, բոլորը:

— Ի՞նչպես ե տրվում աշխատավարձը:

— Մեզանում տիրում ե աշխատանքի արտելային ձևը:

Սկզբներում յուրաքանչյուր արհեստանոց կազմում էր մի արտեղ և աշխատավարձը տարբեր էր: Մակայն, վերջերս բնակչուհիներն առաջարկութեամբ թե աշխատանքը և թե վաստակը միացված են և հավասար բաժանվում են բոլորի միջև:

— Իսկ վճարող և ինչպես են կիրակրվում:

— Կա ընդհանուր խոհանոց, վորից ոգավում են բոլորը, վորոնք աշխատում են: Չաշխատողների համար վճարում են պետութունը վորոշ ժամանակ, վորից հետո ուղարկվում են համապատասխան տեղ—հիվանդանոց, անկեղանոց և այլն:

— Թյուրիմացութուններ հաճախ են լինում:

— Սկզբներում ավելի շատ էր: Ներկայումս կա կոնֆլիկտային հանձնաժողով ավելի հններից: Բացի այդ, աստիճանաբար կյանքն ինքը մշակում է նրանց համար այնպիսի բնական կանոններ, վորոնք հեշտացնում են կոլլեկտիվ կյանքը: Պետք է ասեմ, ավելացրեց վարիչը, վոր նրանք հաճախ այնպես են ընտելանում այս կյանքին, վոր դժվարանում են բաժանվել, իսկ հեռանալուց հետո կապ են պահպանում մեզ հետ:

— Ե՛հ, ընկերներ, սրան վոր լսենք և բոլոր ասածները հալած յուզի տեղ ընդունենք, կմնա, վոր մենք էլ այստեղ տեղափոխվենք, ասաց բանվորուհիներից մեկը, լավ է, խոսենք հենց իրենց, կանանց հետ:

— Ճիշտ է, համաձայնվեցին շատերը:

Այդ միջոցին մոտեցավ նրանց թավ հոնքերով, հաստ յերեսով մի կին, նայեց բանվորների խմբին և դարձավ նրանց.

— Չէք հավատում վարիչին: Սուտը գաղտնի կխոսեն: Նա ճիշտ ասաց ամեն բան: Յես այս տան առաջին հյուրն եմ, ինձանից հետո շատ շատերն են յեկել, գնացել: Մեզ մոտ վատ չեամեն յեկող մեր ընտանիքի անդամն է, մեզ հետ աշխատում է, մեզ հետ ուտում: Բոլորիս ցավը մեկ է, շուտ ենք հասկանում միմյանց... Ճիշտ է, պատահում են և վեճեր, մանավանդ նորեկների հետ, յերբ ազմկում են ննջարանում, կամ անմաքուր պահում շենքը: Բայց այդ լինում էր և մեր տներում, յերբ մենք էլ մեր տունն ունեյինք: Այդ ինքն իրեն ավելացրեց—մենակութունը լավ չի, հիշում ես հինը, անցածը, սէ՛, տխուր: Չեմիսսին լավ է:

Մյուս կանայք ևս թողնելով աշխատանքը շրջապատեցին հյուրերին, վորոնք խմբերով և առանձին սկսեցին հարց ու փորձ:

— Հայրս բանվոր էր, սպանվեց պատերազմում, մայրս կարիքից անձնասպան յեղավ: Յես անապատտան մեծացա. թափառում եյի... Շատ բան տեսա, շատ տանջվեցի, կորավ առող-

ջութունս. էլ յեղ չունեյի. մնում էր մորս նման վերջ տալ կյանքիս, յերբ պատահամբ ընկա այստեղ, ասաց բարեկազմ, յերիտասարդ մի կին, նուրբ գիմադծերով:

— Ի՞նչպես էք զգում ձեզ այստեղ, հարցրին նրան:

— Շատ լավ:

— Ի՞նչ էք մտադիր անելու այսուհետև. չե՞ վոր միշտ չեք մնալու այստեղ:

— Ո՛ր, վոչ, ինձ նման շատերը կան: Յես շտապում եմ շուտով գիր և արհեստ սովորել և առողջանալ, վորից հետո կմանեմ գործարան ու կաշխատեմ այնպես, ինչպես ահա դուք, պատասխանեց կինը:

— Դուք վճարողից էք, հարցրին կարմրաթշիկ, առողջ դեմքով յերիտասարդ մի կնոջ:

— Յես գյուղացի աղջիկ էյի. ինձ ամուսնացրին քաղաքացի մի տղայի հետ, անորոշ զբաղմունքով: Նա բերեց ինձ այստեղ և շատ չանցած թողեց—«կոպիտ» էս ասաց: Մնացի անտեր: Ծնողներս չքավոր էյին, նրանցից հույս չունեյի: Ամուսնացա յերկրորդ անգամ. նրանից էլ խեր չտեսա, նա էլ խաբեց: Կրկին մնացի սոված ու բռնեցի էս ճամբան: Բայց մեր արտերը, սիրուն ձորերը վճնց մոռանայի: Ուժս էլ պակաս չե էս թեքրիցս, ասավ նա, ցույց տալով հաստիկ բազուկը: Հիմա ուղում եմ աշխատել:

— Ի՞նչպես:

— Այ, տեսնում էք, գիր եմ սովորում, կոշիկ կարել, տղամարդուց վատ չեմ կարում: Յերբ լավ սովորեմ, կերթամ մեր գյուղը, կոլլեկտիվի մեջ կմանեմ և կաշխատեմ, տրեխի փոխարեն նրանց սոլ կհագցնեմ, ասաց նա ծիծաղելով:

Բոլորը զոհունակութեամբ նրան նայեցին:

Հետաքրքիր հյուրերն ուշադիր նայելով իրենց շուրջը, թողին արհեստանոցները, վորտեղից մեքենաների զգուցի և մուրձերի թխթխոցի հետ նրանց հասավ անապատտանների աշխատանքի զվարթ յերգը:

Յերբ անցան հանրակացարանները, այցելուների առաջ հերթով բացվեցին մի շարք դռներ: Բոլոր սենյակներում կարգով շարված եյին մոխրագույն բրդե ծածկոցներով յերկաթե մանձակալներ, վորոնց վրա զրված էյին մի-մի բարձ սպիտակ յերեսով, իսկ մանձակալների արանքում՝ փոքրիկ սեղաններ, կամ պահարաններ:

Սենյակներից մեկում զրված էյին միմիայն մանկական մանձակալներ:

— Սրտնք ինչու համար են, մթթե ձեզ մոտ մանուկներ կան:

— Պատահում է հաճախ գալիս են կանաչը մանուկներով, վորոնք ավելի շուտ տանջվում են մեզ մոտ: Այժմ վորոշել ենք մարտի ութին այս տանը կից բանալ և մանկատուն—ասաց վարիչը:

— Զարմանալի բան. ինչու անպայման ուզում եք մարտի ութին բանալ, հարցրեց բանվորներից մեկը. իսկ յեթե մարտի ութը չլիներ, դուք մանկատուն ունենալու չե՞րիք:

— Ճիշտ եք նկատում, պատասխանեց վարիչը, բայց դրա համար միջոցներ են հարկավոր: Մարտի ութին իբրև նվեր առայժմ զանազան կազմակերպություններ փող են նվիրում: Մենք ոգտվում ենք այդ հանգամանքից, բայց կգտնե՞նք ժամանակ, յերբ այս հիմնարկների կարևորությունը կզգան ամենքը, այն ժամանակ սովորություն կդառնա և նրանք կբացվեն ամեն ոք, տարվա բոլոր ամիսներին:

Հյուրերը նայեցին ապաստարանի առանձնարանը, վորտեղ սկզբում ապրում են հյուրերը մինչև բժշկական քննություն յինթարկվելը, ապա լվացքատունը, բաղնիքը, ճաշարանը, դասաբանները, գրադարանը և այլն:

— Ամեն տեղ որինակելի կարգապահություն,— զարմացան բոլորը:

— Այո, և բոլորը շնորհիվ իրենց, ապրողների, վորոնք այս բոլորին նայում են իրենց աչքի լույսի պես:

Հետագոտման ընթացքում Ծաղիկի հայացքը շարունակ վորոնում էր մեկին:

Յերբ այցելութունը վերջացավ, նա մոտեցավ վարիչին:

— Իսկ ո՞ւր ե անց կինը, վորին յես բերի այստեղ:

— Հա, Մաշան, ժպտաց վարիչը: Նա մեր լավագույն վարպետներից մեկն է, գնացել է քաղաք գնումներ կատարելու:

Ինչ խոսքը չեք վերջացրել, յերբ հեռվից պարկն օւռին ներս մտավ մի կին:

Ծաղիկը վազեց նրա դեմ: Նրանք գրկախառնվեցին:

— Այնպես փոխվել ես դու... Անցյալ տարի ամառում եյի քեզ հետ փողոցով անցնել, հիշում ես, բայց հիմա անչափ ուրախ կլինեմ, յեթե ինձ հյուր գաս, անկեղծորեն ասաց Ծաղիկը և յերկուսով ծիծաղեցին:

Բավական ուշ էր, յերբ եքսկուրսիաները վերադարձան ահումր:

— Բա ասում են կուզիկին գերեզմանը կուղղի՞, ասաց Մա-

զիկն իրենց դեկավարին: Հապա ինչու Մաշան այնպես փոխվել է, ուղղվել:

— Ձե, ընկեր Ծաղիկ, նրանք կուզիկներ չեն, նրանց վերջացրել է վատ շրջապատը. պետք է մենք աշխատենք փոխել այդ շրջապատը, պատասխանեց ահումրի քաղ. խմբակի ղեկավարը:

Այդ յերեկո բան. ահումրում եքսկուրսիաները յերկար ժամանակ պատմում էյին ընկերներին իրենց տպավորությունները:

Մարտի 8-ն էր:

Կես որին մոտ, չնայած ճաշվա ժամին, դռնապան Դավթի տանը, փոքրիկ մաքուր սենյակում, որինակելի մաքրության հետ, սեղանին կրկին խոշոր էր հնամաշ, ծուռ ինքնայեղը վորոկե փայլով, վորի մոտ այս անգամ բացի խաշած դեղնախինձորից զրված էր մի ավսեյով յերշիկ, կարմիր բողկ, կանաչի և պանիր: Իսկ սեղանի շուրջը, Ծաղիկի մոտ, նստած էր և մի այլ կին:

Դավթիթը ներս մտնելով, պահ մի կանգ առավ, նայեց անձանութին:

— Ճանաչեցի՞ր, հարցրեց Ծաղիկը:

— Մեծ դժվարություններ, վորքան փոխվել է, ասաց նա:

Իրավ, դժվար էր ճանաչել նրան:


Նախկին շեկ խոպուպներով, ներկած այտերով ու շուրթերով, խայտաբղետ գլխարկով ինքնավաճառ թափառաշրջիկ կնոջ փոխարեն, այժմ նստած էր անապաստան կանանց տան բնակչուհիներից մեկը—միջահասակ, հարթ սանրված շեկ մազերով, վորի դունատ դեմքը հիմա կրում էր աշխատանքի և կյանքի փորձի խոր զրոշմը, իսկ յերբեմնի ժպտուն, կապույտ աչքերը փայլում համեստ փայլով:

Տեսնելով գիշերային այն պահապանին, վորը հաճախ տեսել էր նրան անվայել վիճակում, կլինն անհարմար կանգնեց և շառագունելով՝ աչքերը խոնարհեց:

Դավթիթը մոտեցավ նրան, կոշտացած ձեռներով սրտազին վողջունեց և դառնալով Ծաղիկին գոչեց.

— Այ, հիմա կասեմ, կեցցե մարտի 8-ը:

— Այո, ճիշտ է, ասաց զգացված հյուրը և աշխատավոր ընտանիքը փոքրիկ սեղանի շուրջն ուրախ տոնեց մարտի ութը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ
(19) 6 Ն Վ՝ՅՈՍԳՆՍԿԵՆ

107

«Ազգային գրադարան»



NL0333194

30212

